ՏԵՂԵԿԱՆՔ

«ԽԱՂԱՂ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 12. Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում տեղեկություններ ստանալու իրավունքը

Հայաստանի Հանրապետության իրավաբանական և ֆիզիկական անձինք իրավունք ունեն պետական իրավասու մարմիններից ստանալ տեղեկություններ՝ նախագծվող, կառուցվող, շահագործվող և շահագործումից հանվող ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անվտանգության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ճառագայթային իրավիճակի վերաբերյալ, եթե դրանք պետական ~~կամ ծառայողական~~ գաղտնիք չեն պարունակում:

Հոդված 17[1]. Կարգավորող վերահսկողությունը

1. Կարգավորող մարմնի պետական տեսուչներն իրավունք ունեն՝

ա) անարգել անցկացնելու ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների և իրականացվող աշխատանքների ստուգումներ՝ կիրառելով անհրաժեշտ չափիչ և գրանցող սարքեր (ներառյալ՝ ձայնագրող և տեսագրող).

բ) անարգել մուտք գործելու ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների ծառայողական և արտադրական տեղամասեր:

գ) ***(կետն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-266-Ն)***

դ) ***(կետն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-266-Ն)***

ե) ***(կետն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-266-Ն)***

զ) ***(կետն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-266-Ն)***

է) ***(կետն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-266-Ն)***

2. Պետական տեսուչները պարտավոր են՝

ա) պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները.

բ) չհրապարակել ստուգվող օբյեկտի վերաբերյալ պետական, ~~ծառայողական,~~ առևտրային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկություններ.

գ) չխոչընդոտել ստուգվող օբյեկտի բնականոն աշխատանքը.

դ) ստուգվող օբյեկտի պաշտոնատար անձանց ծանոթացնել նրանց և պետական տեսուչների իրավունքներին ու պարտականություններին.

ե) պահպանել ստուգվող օբյեկտի՝ օրենքով սահմանված իրավունքներն ու շահերը:

3. Կարգավորող վերահսկողության աշխատանքներում օրենսդրությամբ կամ միջազգային պայմանագրերով սահմանված կարգով կարող են ներգրավվել պետական կառավարման մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ և օտարերկրյա մասնագետներ:

4. Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում ստուգումները պլանավորվում և իրականացվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, այդ թվում՝ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անվտանգության ստանդարտներով, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն օրենքով սահմանված կարգով:

(17[1]-ին հոդվածը լրաց. 09.11.04 ՀՕ-119-Ն, 12.05.16 ՀՕ-74-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-266-Ն)

Հոդված 29. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտներում աշխատելու իրավունքը սահմանափակելը

Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտներում, միջուկային, ռադիոակտիվ նյութերի, ռադիոակտիվ թափոնների հետ աշխատելու իրավունք չունեն՝

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք.

բ) ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտներում և իոնացնող ճառագայթման աղբյուրների հետ աշխատանքների բժշկական հակացուցումների ցուցակով նախատեսված հիվանդություններով տառապող անձինք.

գ) տվյալ աշխատանքի կատարման համար պետական ~~և ծառայողական~~ գաղտնիքին իրազեկ լինելու իրավունք չունեցող անձինք.

դ) տվյալ աշխատանքներն իրականացնելու համար հուսալիության ստուգման պահանջներին չհամապատասխանող անձինք:

Ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտներում աշխատանքներ իրականացնող անձանց հուսալիության ստուգման կարգը հաստատում է Կառավարությունը:

(29-րդ հոդվածը լրաց. 09.11.04 ՀՕ-119-Ն, փոփ. 07.02.18 ՀՕ-109-Ն, 23.03.18 ՀՕ-266-Ն)